# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության  Լոռու մարզի  Մարգահովիտ համայնք,
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, Հեռ. /374/ 93968825 ,
margahovit.lori@mta.gov.am

N 163
*11 ապրիլ 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ներկայացնում եմ Մարգահովիտ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 09-ի թիվ, թիվ 12-Ա, 13-Ա, 14-Ա, 15-Ա, 16-Ա որոշումները:

Առդիր՝ 5  թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խառատյան*
*Հեռ. /374 94/ 39-19-86*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 12-Ա

### ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 09-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մարգահովիտ համայնքի ավագանու 2019թ. ապրիլի 09-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Մարգահովիտ համայնքի ավագանու 2019թ.-ի ապրիլի 09-ի հերթական նիստի.

1. Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկի և գնացուցակի մասին.
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին.
3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Լոռու մարզում Մարգահովիտ համայնքի ամբուլատորիայի վերանորոգման աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվության մասին.
4. Համայնքի գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 13-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՑԱՆԿԻ ԵՎ ԳՆԱՑՈՒՑԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը համաձայն հավելված 1-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 14-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՀԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 15-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 3-ի թիվ 596-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Մերժել.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Մարգահովիտ համայնքի ամբուլատորիայի վերանորոգման շինարարության թույլտվության համար տեղական տուրքը արտոնություն տրամադրելու հարցը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
## ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, /374/ 93968825, margahovit.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 16-Ա

## ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Մարգահովիտ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություններ և ավելացնել հետևյալ գույքը.

1. Կուլտիվատոր - 1 հատ - 2.500.000 ՀՀ դրամ.
2. Խոտհավաք - 1 հատ - 600.000 ՀՀ դրամ,
3. Փողոցային լուսավորություն (2018թ.) - 996.000 ՀՀ դրամ:

Կողմ 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍԱՓԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ